ՔԱՂՎԱԾՔ
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2025 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԹԻՎ 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով
Երկուշաբթի, 22 հունիսի 2026 թ., 14:05

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 22.06.2026 թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 27.05.2026 թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է «Ժողովուրդ» օրաթերթում և azdarar.am կայքում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին 29.05.2026 թ.-ին:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 22.06.2026 թ.-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 22.06.2026 թ.-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 191,254,472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 183,678,063 բաժնետոմս կամ տոկոսային հարաբերությամբ 96.04%-ը:

Քվորումն ապահովված է:

Հարց 5. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025 թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշում ընդունելու մասին:

Հաշվի առնելով Բանկի 2025 թ. գործունեության ֆինանսական արդյունքները՝ բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 9,325,724,980.60 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 23.06.2026 թ.-ից մինչև 30.06.2026 թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2025 թ. զուտ շահույթի 5%-ը:

կողմ՝ 183,678,063 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 23 հունիսի 2026 թ.